



ՄԱՍԻԱՑ ԱՂԱՀՆԻ

Ա. ԲԱՏԻՆ

Հ Ա Յ Ա Ս Ա Խ Ա Յ Ա Յ



ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔ.



ԲԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՎԻՃԱԿԻ ՀԱՅՈՅ ՆԱԽԵԶԵԽԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱԳԻՈՅ

2380

ՊԱՇՈՒԱԿԱՆ ՅԱՅԱԿԱԳԻՒԹԻՒՆ.

Առաջնորդական Ա-
տեան Վիճակիս
Հայոց Նախիջեւա-
նի եւ Պետականիոյ՝ ըն-
դունեցաւ անցեալ գեկտեմ-
բերի 51-ին իւր Թերապատիւ-
սահնապետին գրաւոր առա-
ջարկութիւնը, յորում յառաջ ըն-
թելով Թեմական Տեղեկութեանց Հրա-
տարակութեան օգուտները, մանաւանդ թէ
անհրաժեշտ Հարկաւորութիւնը, կըսէր.

ՅՈՒՆԻԿԱ 1863.

„Տեսեալ յայտնապէս իննօպամեայ փորձոյ՝
„զի բազումք յեկեղեցականացն մերոց ոչ ու-
„նից զիլիւրութիւն ընդունելոյ զամենացն տե-
„ղեկութիւն կարեւոր զիլարզադրութեանց եւ
„զերեւելի անցից այսր մեծատարած Վիճակի,
„թող թէ եւ զայրաց միճակաց Հայաստանեացն
„եկեղեցոյ, որով եւ անձանօթ մնան բազմաց
„ինոցանէ հանրական հրովարտակք Աթենն-
„դասին սրբոյ Էջմիածնի զայլ եւ այլ խնդրոց.



„պաշտօնական եւ հանրական հրամանք Ա-
„ուաշնորդական Ստենիս առ եկեղեցականս եւ
„առ երեցինանս՝ որ ընդ տեսչութեամբ
„սորին են, եւս եւ փոփոխութիւնքն որ լի-
„նին երբէք երբէք իպաշտամունս եւ իդաս-
„քանանայից եւ դպրաց եւ երեցփոխանաց՝
„ձեռնադրութեամբ, տեղափոխութեամբ, վար-
„ձատրութեամբ, եւ կամ փոխամբ նոցին
„յաստեաց. դարձեալ եւ յառաջադիմութիւն
„, եւ հանգամանք ժողովրդական Դպրոցաց վի-
„ճակիս, եւ վաստակք կամ փոփոխութիւնք
„ուսուցչաց նոցին, — հարկ եւ պատշաճ համա-
„թիմք՝ զգիսաւորագոյնս յայսպիսի տեղեկու-
„թեանց տպագրութեամբ հրատարակել ամիս
„յամսոյ, եւ առաքել առ ամենայն եկեղեցա-
„կանս վիճակիս “:

Առաջնորդական Ստեանս ճանչնալով մէկ
կողմանէ այս առաջարկութեան կարեւորու-
թիւնը, եւ միւս կողմանէ վկայելով որ այս
պիսի տեղեկութեանց առանձին տպագրու-

թիւնը ոչ սակաւ ծախուց կկարօտի, որոշեց
նախ՝ որ 1863 տարւոյս սկիզբէն՝ այս թեմա-
կան Տեղեկութիւնները տպագրուին Մասնաց
Աղաւնի ամսագրոյն սկիզբը ամէն ամիս։ Երկ-
րորդ՝ տպագրելի աեղեկութիւնները յանձ-
նուին ընտրութեան կամ որոշման Գերապա-
տիւ Ստենապետին։ Երրորդ՝ Առաջնորդա-
կան Ստենիս ձեռօքը յուղարկուին մէկ մէկ
օրինակ առ ամենայն եկեղեցականս եւ առ
երեցփոխանս վիճակիս։ Չորրորդ՝ առանձին
հաշիւ բռնուի յայսմ մասին Խալիպեան Ռւ-
սումնարանի Տպարանին հետ։ Եւ հինգերորդ՝
թեմական Տեղեկութեանց տպագրութեանը
համար մասնաւոր Գործ կազմուի յԱռաջնոր-
դական Ստենիս։

Այս անգամ կհատարակուին աւասիկ ան-
ցեալ 1862 տարւոյն մէջ աւարտեալ բազմա-
թիւ գործերէն անոնք միայն՝ որոց տեղե-
կութիւնը բազմաց օգտակար կամ հետաքրը-
քրական կրնայ երեւնալ. իսկ յաջորդ ամսա-
թերթերուն մէջ աւելի ընդարձակ եւ նո-
րանոր տեղեկաւթիւններ կդրուին։

Պատենադպիք, ԱՏ. ՍՈՒՐԵՆՆԵԱՆՑ.

ՔԱՂՈՒԱԾ ԳԼԽԱԿՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ ՅՈՐԱԳՐՈՒԹԵՆՑ 1862 ԱՄԵՆ.

Խ25 Յունուարի, ըստ առաջարկութեան ժո-
ղովրդականաց Պեսարապիոյ Հնչեշտ գիւղաքա-
ղաքին, — որ է կալուած վսեմափայլ Յովիհաննու
Մուրատայ Մանուկ-Պէյի, — տեղւոյն եկեղեցւոյն
երեցփոխան դրուեցաւ մեծարգոյ դպիըն Պողոս
Յովիհաննիսեան Աւագեանց :

— Յտեսսայի եկեղեցւոյն երեցփոխան մեծար-
գոյ եղիս Աղայն Քըրմեանց իւր աստուածահա-
նոյ պաշտօնը ինը տարի ամենայն հաւատարմու-
թեամբ կատարած լինելով, ըստ վկայութեան
ժողովրդոց քաղաքին՝ առաջարկուեցաւ Կայսե-
րական վարձարբութեան. եւ դարձեալ ըստ ըն-
տրութեան եւ առաջարկութեան ժողովրդեան Յ-
տեսսայի, նոյն բարեպաշտ եւ ազգասէք պա-
տուական անձը նորէն հաստատուեցաւ երեցփո-
խանութեան պաշտօնին մէջ՝ այլ եւս երեք տարի
աշխատելու պայմանաւ։

— Խ15 Մարտի. Գրիգորուազուոյ սուրբ Աս-
տուածածին եկեղեցւոյ քահանայն Տէր Խաչատուք
Մամուէլեանց փոխադրուեցաւ իհովուութիւն ե-
կեղեցւոյն Հին Խրիմու, եւ այս քաղաքի քահա-
նայն Տէր Կարապետ Թադէոսեան փոխադրեցաւ

առժամանակեայ քահանայագործութեամբ իգիւ-
ղաքաղաքն Հնչեշտ :

— Յ19 Մարտի. Նախիջեւան, Սուրբ Աստուա-
ծածին եկեղեցւոյ բազմարդիւն երեցփոխան ազ-
նուական Ստեփան Աղայն Նախարար՝ իւր պաշ-
տօնը երեք տարի ամենայն գովութեամբ կատա-
րելէն յետոյ, ըստ խնդրոյ իւրում արձակեցաւ այն
պաշտօնէն հանդերձ Հնորիհակարութեամբ ժողո-
վրդեան եւ Առաջնորդական Ատենիս, եւ տեղը
երեցփոխան կարգեցաւ մեծարգոյ Գրիգոր Աղայն
Խալիքով։

— Յ2 Ապրիլի. Նախիջեւանի սուրբ Թէոդորոս
եկեղեցւոյն մեծարգոյ երեցփոխանը՝ Թադէոս Աղա
Քէօլէշահինեան՝ իրէն պաշտօնը վեց տարի ա-
մենայն գովութեամբ կատարելէն յետոյ, նորէ-
ընտրութեամբ հաստատուեցաւ այն աստուածա-
հանոյ ծառայութեան մէջ՝ ընդունելով Առաջնոր-
դական Ատենիս Հնորիհակարութիւնը։

— Յ7 Ապրիլի. Ըստ բարեպաշտական առաջար-
կութեան ոմանց իբնակչաց Խրիմու սահմանեցաւ
որ Խարասու քաղաքին մօտ եղած Ա. Փրկիչ Վան-
քին երկու ուխտական հանդիսաւոր օրերուն վե-